

«ԿԱՍԿԱԴ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ձև 5)

2009թ. III եռամսյակ

Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

Իրավական դաշտ

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2004թ. ապրիլի 8-ին Ընկերությունը 2008 թվականի հունիսի 27-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվել է որպես ներդրումային ընկերություն (գրանցման վկայական թիվ 1, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա թիվ 0001, տրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից 27.06.2008թ.):

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն ներկայացուցչություններ և մասնաճյուղեր չունի: Ընկերության գտնվելու վայրն է (իրավաբանական հասցեն) Հայաստանի Հանրապետություն, Երևան, Գեղատան փող. 6:

Ընկերության հիմնական գործառնությունների տեսակներն են.

- Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում
- Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին
- Իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում
- արժեթղթերի փաթեթի կառավարում
- արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում
- արժեթղթերի պահառություն
- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում
- արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում
- արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմում և տարածում:

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն 18.02.2009թ.-ից հանդիսանում է ՆԱՍԳԱԸ ՕԷՄԷԶՍ Արմենիա ֆոնդային բորսայի անդամ:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից և ՆԱՍԳԱԸ ՕԷՄԷԶՍ Արմենիա-ի կողմից: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 11 մարդ:

Գործարար միջավայր

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում:

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն որևէ խմբի անդամ չի: Ֆինանսական հաշվետվությունները վերաբերվում են միայն կազմակերպությանը:

Կորպորատիվ կառավարում

Ընկերության կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը, ընկերության տնօրենների խորհուրդը և գլխավոր տնօրենը:

Ընկերության տնօրենների խորհուրդը

Ընկերության տնօրենների խորհուրդը կազմված է 5 անդամներից, որոնք ընտրվում են Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում ներկա բաժնետերերի կողմից: Ընկերության խորհրդի կազմը հետևյալն է՝

Խորհրդի նախագահ

Ջոնաթան-Պատրիկ-Կոնրադ Սթարկ

Խորհրդի անդամներ

- Սիարոն Լևոնյան
- Գառնիկ Տոնոյան
- Ռոբերտ Թոմաս Դիրեյ
- Արփի Կարապետյան

Գլխավոր տնօրեն

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր միանձյա մարմինը՝ Գլխավոր տնօրենը: Ընկերության գլխավոր տնօրենն է Հ. Պապյանը:

Ընկերության Գլխավոր տնօրենի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է ընկերության տնօրենների խորհրդի և/կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և դրա հիմնական սկզբունքները հիմնված են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության, Ընկերության որդեգրած ռազմավարության, կանոնադրության և ներքին կանոնակարգերի վրա:

Ընկերության կառավարման վերը նշված մարմինները վերահսկում և գնահատում են գործադիր մարմնի աշխատանքը՝ հաշվապահության, ներքին դիտարկումների մարմնի, ներքին աուդիտի, ինչպես նաև արտաքին աուդիտի կողմից ստացվող եզրակացությունների, զեկույցների և հաշվետվությունների հիման վրա:

Գործադիր մարմնի աշխատանքը ներառում է ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների կատարումը, ռիսկերի կառավարման նպատակով որոշումների ընդունումը, ընթացիկ և ֆինանսական գործունեության արդյունավետության հսկումը, հաշվապահության, ներքին դիտարկումների մարմնի, ներքին աուդիտի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների և պատասխանատու աշխատակիցների գործառնությունների կազմակերպումը, վերահսկողությունն ու ղեկավարումը:

Դեկավարների վարձատրության քաղաքականությունը

Դեկավարների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարց: Ընկերության մասնակիցներին է վերապահված դեկավարի աշխատանքի գնահատման գործառույթը:

Արտաքին աուդիտին վճարներ

Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը կատարվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

Ընկերությունը 2008թ.-ի Ֆինանսական գործունեության տարեկան աուդիտը իրականացրել է «ՔԵԵ-ՓԻ-ԷՆ-ՋԻ Արմենիա ՓԲԸ» Աուդիտորական ընկերության կողմից:

Բաժնետերեր

Ընկերության բաժնետերերը երկուսն են: Ընկերության նշանակալից բաժնետեր է հանդիսանում «Գ.ա.Ֆէսճեան Ընտանեկան Հիմնադրամը», որին էլ պատկանում է բաժնետիրական կապիտալի 99.99993%: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 36-ում:

Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 116-Ն Որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգին և ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ի 2009թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքին, հաշվապահական հաշվառման ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է հազար դրամներով:

Անընդհատություն

Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն կազմված սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որն ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում բանկային հաշիվները և դրամարկղի դրամական միջոցները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք`

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում է կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին

պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չեն վերադասակարգվում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ նրանց՝

- որոնց Ընկերությունը մտադիր է վաճառելու անմիջապես կամ կարճ ժամկետում,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Ընկերությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարումնակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական

արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռք բերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ`

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե առկա շուկայական տվյալների հիման վրա կատարած գնահատումը վկայում է սկզբնական ճանաչման պահին արժեքի համեմատ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի աճի կամ նվազման մասին, ապա այդ աճից/նվազումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում են անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե սկզբնական շահույթի կամ վնասի գումարը գնահատվում է հիմք ընդունելով ոչ միայն առկա շուկայական տվյալները, ապա այս շահույթը կամ վնասը համարվում են հետաձգված և ճանաչվում են ակտիվի կամ պարտավորության օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, կամ ճանաչվում են շուկայական տվյալների առկա դառնալու, կամ ակտիվի կամ պարտավորության օտարման պահին:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ գեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Չեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում, դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ գեղչման դրույթը մասնատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը հաշվառվում են ինքնարժեքով:

Բորսաներում չըջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Ընկերությունը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով չափվող, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,

- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերությունների), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացվելու ժամանակ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի միջոցով:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված

սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Դասի անվանումը	Օգտակար ծառայությունը
Շենքեր	20 տարի
Համակարգիչներ	3 տարի
Մոնիտորներ	4 տարի
Տպիչներ	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայությունը սահմանվում է 1 տարի:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռք բերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռք բերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Դասի անվանումը	Օգտակար ծառայությունը
Համակարգչային ծրագրեր	10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	1 տարի

բայց ոչ ավել ոչ նյութական ակտիվի իրավաբանորեն ամրագրված օգտագործման ժամանակահատվածից:

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և վաճառքի համար մատչելի չգնանշված պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի

ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնց հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունը այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ առկա տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Նախևառաջ Ընկերությունը գնահատում է, արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի այն զգալի թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման խմբային գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Ընկերության տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Ընկերությունը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումն հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով համապատասխան պահուստի: Ընկերությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ դեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չզնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող սպագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են, գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով գեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր

տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները ճանաչվում է որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում:

Եկամտի և ծախսի ճանաչում

Բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներին և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, վերաբերող տոկոսային եկամուտն իրենից ներկայացնում է միայն կտրոնների գծով տոկոսները:

Ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, հաշվեգրված գեղչերը և հավելավճարները ճանաչվում են շահույթի կազմում՝ հանած ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կրած վնասները:

Կոմիսիոն և այլ վճարները, այլ եկամուտի և ծախսի միավորները ճանաչվում են համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով ստացված եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ շահաբաժնի հայտարարման օրը:

Մեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

1. թողարկված և լրիվ վճարված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը - 1 449 051 հատ
2. բաժնետոմսերի անվանական արժեքը-162 609.6 հազ. ՀՀ դրամ

Մեփական կապիտալում պահուստներ ընդգրկված չեն:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

Հաճախորդների միջոցներ

Արտահաշվեկշռում ներառված են ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդների հետ կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի և բրոքերային պայմանագրերի համաձայն ստացված միջոցները, դրանց գծով պարտավորությունները և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքերը:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և մնանադիպ եկամուտներ»

Տոկոսային և մնանադիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	281	
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	35 735	
Տոկոսային եկամուտներ տրված վարկերից (փոխառություններից)		
Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից		
Տոկոսային եկամուտներ սվոպից		
Այլ տոկոսային եկամուտներ	858	
Ընդամենը	36 874	
Տոկոսային և մնանադիպ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	28 137	
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով		
Տոկոսային ծախսեր սվոպի գծով		
Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց		
Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց և այլ տոկոսային ծախսեր	21 696	
Ընդամենը	49 833	
Զուտ տոկոսային և մնանադիպ եկամուտ	(12 959)	

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	7 879	
Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	1 198	
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից		
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից		
Պահառության գործունեությունից		
Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից		

Այլ միջնորդավճարներ		
Ընդամենը	9 077	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Միջնորդավճարների գծով ծախսեր		
Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	9 077	

Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»

Շահաբաժիններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ	-	
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	-	
Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ	-	
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	-	

Ծանոթագրություն 6. «Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից գուտ եկամուտ	23 700	
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից գուտ եկամուտ		
Ընդամենը	23 700	

Վաճառքի համար մատչելի ներդրումներից	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վաճառքի համար մատչելի ներդրումների առու վաճառքից գուտ եկամուտ		
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից գուտ եկամուտ		
Ընդամենը		

Արտարժույթային գործառնություններից	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	70	
Արտարժույթի վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	124	
Ընդամենը	194	
Ընդամենը գուտ եկամուտ առևտրային գործառնություններից	23 894	

Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»

Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված գուտ եկամուտներ		

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ			
Արտասովոր եկամուտներ*			
Այլ եկամուտներ**	(1 605)		
Ընդամենը	(1 605)		

Ծանոթագրություն 8. «Ձուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	15		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդ			

Հաճախորդների նկատմամբ պահանջներ	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	16		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդ			

Ներդրումների գծով	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	19		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդ			

Այլ ակտիվների գծով	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան

Սկզբնական մնացորդ	23		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդ			

Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

Ընդհանուր վարչական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	42 457	
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	3 631	
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	-	
Անձնակազմի այլ ծախսեր	-	
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	4 725	
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	-	
Ատոլիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	5 819	
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1 185	
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	308	
Տրանսպորտային ծախսեր	285	
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	2 165	
Այլ վարչական ծախսեր այդ թվում՝ ապահովագրության գծով ծախսեր	2 441 916	
Ընդամենը	63 016	

2009 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Ընկերության աշխատողների միջին եռամսյակային թվաքանակը կազմել է 12 աշխատակից: Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափն է 393'955 ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հասարակական կապերի գծով ծախսեր	3 022	
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	1 584	
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	176	

Այլ ծախսեր		
Ընդամենը	4 782	

Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)»

Ընկերությունը այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չի իրականացրել:

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից		
Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից		
Դուսար ընկերություններում ներդրումներից		
Այլ դուսար ընկերություններում ներդրումներից		
Ընդամենը	-	

Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ: Այս հետաձգված հարկային ակտիվները չեն ճանաչվել սույն ֆինանսական հաշվետվություններում: Ապագա հարկային օգուտները կիրացվեն միայն այն դեպքում, երբ առկա լինի շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել չօգտագործված հարկային վնասները, և եթե օրենքներում ու կանոնակարգերում չեն կատարվի այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ապագա ժամանակաշրջաններում նվազեցումներ պահանջելու Ընկերության կարողության վրա: Ապագա հարկային օգուտները չեն ճանաչվել իրացման հետ կապված անորոշությունների պատճառով:

Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները		
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընդամենը		

Հաշվետու եռամսյակում ընկերությունը հաշվապահական և հարկային շահույթ չի ունեցել:

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետ դրույթաչափ (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույթաչափ (%)

Շահույթը մինչև հարկումը	X	-	X	-
Շահութահարկի՝ դրույթաչափով	X	20	X	20
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	(X)	(X%)	(X)	(X%)
Չնվազեցվող ծախսեր	X	X%	X	X%
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	X/(X)	X/(X)	X/(X)	X/(X)
Շահութահարկի գծով ծախս				

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդ նախորդ ժամանակա- շրջանի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Մեփական կապիտալում ճանաչված	Մնացորդ հաշվետու ժամանակա- շրջանի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝</i>				
Առևտրական նպատակով պահվող արժեթղթերի գծով				
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով				
Հիմնական միջոցների գծով				
Այլ ակտիվների գծով				
Ստեղծված պահուստների գծով				
Այլ պարտավորությունների գծով				
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝</i>				
Առևտրական արժեթղթերի գծով				
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով				
Հիմնական միջոցների գծով				
Այլ ակտիվների գծով				
Այլ պարտավորությունների գծով				
<i>Չուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորու- թյուն</i>				

Ընթացիկ և հետաձգված հարկերի գծով Ընկերության նկատմամբ կիրառելի հարկային դրույթը կազմում է 20%:

Ծանոթագրություն 13. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ հարկումից հետո		
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված		

շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով		
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթ (վնաս)		
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ	-	

Ծանոթագրություն 14 «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր	155	
Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ ՀՀ կենտրոնական բանկում		
Դեպոնացված միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում		
Հաշվեգրված տոկոսներ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	155	

30 սեպտեմբերի 2009թ. դրությամբ Ընկերության դրամարկղում կանխիկ դրամական միջոցների գումարը կազմում է 155 հազար ՀՀ դրամ, և այն օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ բանկերում	1 410	
Այլ բանկերում		
Դեպոնացված հաշիվներ բանկերում	244	
Ընդամենը	1 654	
<u>Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ</u>		
ՀՀ ԿԲ-ում՝		
վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ ռեպո (հետգնման) պայմանագրեր այլ		
Բանկերում՝		
վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ ռեպո (հետգնման) համաձայնագրեր արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում		
վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ		

ռեպո (հետզմման) համաձայնագրեր արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	()	()
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1 654	

30 սեպտեմբերի 2009թ. դրությամբ ՀՀ և այլ բանկերում Ընկերության ընթացիկ հաշիվների ընդհանուր գումարը կազմում է 1'654 հազար ՀՀ դրամ, և այն օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վարկեր և տրամադրված փոխառություններ, այդ թվում՝ ՀՀ Կառավարությանը ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին հիփոթեքային		
ռեպո (հետզմման) համաձայնագրեր		
արժեթղթերի փաթեթի կառավարում		
այլ		
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	257	
Ընդամենը պահանջներ		
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)		
Ընդամենը զուտ պահանջներ	257	

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում հաճախորդներին տրամադրված արժեգրված վարկերի և տրամադրված փոխառությունների կառուցվածքը	Հաշվետու ժամանակաշրջան գումարը/քանակը	Նախորդ ժամանակաշրջան գումարը/քանակը
Վարկեր և տրամադրված փոխառություններ, որից		
արժեգրված վարկեր և տրամադրված փոխառություններ, այդ թվում՝ ժամկետանց վերաձևակերպված վերաֆինանսավորված		
Ընդամենը վարկեր	-	
Հաճախորդներին տրված վարկերի և տրամադրված փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)		
Ընդամենը զուտ վարկեր	-	

Վերաձևակերպված են համարվում այն ակտիվները, որոնց մարման ժամկետները կամ այլ պայմանները վերանայվել (վերաձևակերպվել) են, գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքներին, կամ էլ պայմանները վերանայվել են այլ կերպ՝ պարտապանի (փոխառուի) համար առավել նպաստավոր ուղղությամբ, ինչը պայմանավորված է նրա վատ ֆինանսական դրությամբ և (կամ) նրա՝ պարտքը մարելու կարողությամբ:

Վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են, որոնց մարումն իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների աղբյուրների հաշվին:

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ հաճախորդների	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Քանկեր, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Այլ ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Պետական ձեռնարկություններ, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝ խոշոր ձեռնարկություններ փոքր և միջին ձեռնարկություններ		
Ֆիզիկական անձինք, այդ թվում՝ սպառողական վարկեր հիփոթեքային վարկեր ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
Անհատ ձեռնարկատերեր, այդ թվում՝ սպառողական վարկեր հիփոթեքային վարկեր ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
Հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝ վարկերի և տրամադրված փոխառությունների գծով ռեպո (հետգնման) համաձայնագրերի գծով այլ ակտիվների գծով	257	
Ընդամենը պահանջներ	257	
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Ընդամենը զուտ պահանջներ	257	

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ոլորտների	Հաշվետու ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
Արդյունաբերություն, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Գյուղատնտեսություն, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Շինարարություն, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Տրանսպորտ և կապ, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Առևտուր, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Սպառողական				
Հիփոթեքային վարկեր				
Սպասարկման ոլորտ, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Այլ, այդ թվում՝ վարկեր և տրամադրված փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ				
Հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝ վարկերի և տրամադրված փոխառությունների գծով ռեպո համաձայնագրերի գծով այլ ակտիվների գծով	257	100		
Ընդամենը	257	100		

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունը ըստ ռեզիդենտության	Հաշվետու ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
ՀՀ ռեզիդենտներ				

Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ				
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ				
Հաշվեգրված տոկոսներ	257	100		
Ընդամենը	257	100		

Ծանոթագրություն 17. «Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ	13 833	13 833		
ԲԲԲ- (Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
ԲԲԲ- (Բաա3) -ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ				
Ընդամենը պետական արժեթղթեր	13 833			

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
	<i>ցուցակ ված</i>	<i>չցուցակ ված</i>	<i>ցուցակ ված</i>	<i>չցուցակ ված</i>
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ կապիտալի գործիքներ այլ				
